եւ Արարատ կայ, այնտեղ կայ նաեւ հայկական ոճը:

Բայց դեռ աւելին:

Էջմիածնի եկեղեցում հոյակապ են Նաղաշ Յովնաթանի որմազարդերը: Նկարիչը իսկական յայտնատեսութեամբ կարողացել է պատերին դունաւոր կենդանութիւն տալ, առանց վիրաւորելու միջավայրի ամբողջական տպաւորութիւնը: Իր այդ նպատակին հասնելու համար նա չի արտանկարած: Ինչպէս պիտի անէր որեւէ միջակութիւն չի օգտագործած գոյութիւն ունեցող մոթիվները, այլ յանձնուելով մթնոլորտից ստեղծուած զգայողութեան, պատերը նաղշել է բոլորովին նոր ձեւով:

Ու Նաղաշի որմանկարը ոչ միայն չի հակասում ընդհանուր ոճին, այլ իր մտերմութեամբ, իր բարդ ու միեւնոյն ժամանակ պարզ դունաւորումով, հարստացնում է եկեղեցին, խորութիւն տալիս նրան եւ գեղեցկութիւն: Կառուցողական կուտակումը, նկարիչի գծաւորումը եւ աղօթողի ոգին ներդաշնակօրէն միանում են հիմնական հոգեկան տրամադրութեան մէջ, համադրւում են մի նպատակի համար, թէեւ նրանց ընտրած ճանապարհը եւ միջոցները բոլորովին տարբեր են:

Նաղաշը գործ է ածում իր դարու ոճը, իր ժամանակի տեքնիկը, իր ուրոյն ճաշակը, իր գոյների բարդութիւնը եւ դարերի միջից, ստեղծագործական իր ենթագիտակցութեան մէջ, գնում ընդդրկում է եկեղեցին ստեղծողի հիմնական ոգին: Նրա նկարի պարսկա-հայկական բնոյթը հրաշալի կերպով լրացնում է հայկական ճարտարապետական ոճը, առանց նմանողութեան դիմելու, ինչպէս արել է դրադրանը չինող բթամիտ ճարտարապետը եւ ինչպէս անում են կեղծ հայկական ոճ ստեղծող արուեստագէտները եւ բանաստեղծները:

Ու ահա, «լուսաւորեալ» մի կաթողիկոս, նոյն ինքը Խրիմեանը, յանուն առաջադիմութեան եւ քաղաքակրթութեան, հիմն բաներ անուանելով, ծեփել է տուել անողոք կերպով որմանկարի ամենագեղեցիկ մի մասը, եւ ոչ մի սպառնացող ատրճանակ չի արգիլել այդ ոճիրը:

* * *

Ցիշում եմ, հազիւ ճնշել էի յուզումս, երբ մայր սեղանի վրայից, գլուխը միջադարեան մոմակալների միջից բարձրացնելով, հնդկա-հայկական վարագոյրի տակից, մութի դէմ մաքառելով, յառեցին ինձ ծանօթ աչքեր:

«Դո՞ւք, տիկին, այստե՞ղ»...

Չէի ուզում աչքերիս հաւատալ: Սակայն, կասկած չկայ, նա էր:

«Ներեցէք, ասացի, ի՞նչ տարօրինակ բան...Ես ձեզ տեսել էի Պալլացցո Պետտի, Արնոյի ափերին, այնտեղ, ուր գեղաձիծաղ Ֆիեզոլէն բարձրանում է լաղուր երկնքի դէմ, ուր Լորենցօ Հրաշալին երգում էր սէրը եւ գինին, ուր Դանտէն տառապում էր եւ Դոնատիլլօն քանդակում եւ ուր դուք պատահական հիւր էիք:

«Ես գիտեմ ձեր կենսագրութիւնը: Դուք ծնուել էք հրաշքի պէս գինետան տակառի վրայ, որովհետեւ ձեզ ստեղծողը փող չունէր, որպէսզի վճարէ իր խմածը: Նա ձեզ լքել էր այնտեղ իբրեւ աննշան մի բան, ձեռքի խաղ, բոպէական յիշատակ, բայց դուք, ձեր մեծ թաւշեայ աչքերով, ձեր աննման գեղեցկութիւններով, ձեր աստուածային շունչով դուրս եկաք այն գռեհիկ միջավայրից, ճեղքեցիք խաւարը եւ տարածեցիք շլացուցիչ ձեր հմայքը: Քանի՜, քանի՜ դարեր ձեզ երկրպագեցին իբրեւ կանացութեան կատարեալ արտայայտութիւն եւ գեղեցկութեան բարձրագոյն տիպար: Եւ, օ՜ հրաշալի արարած, O՜ madonna della seggiola, ձեր հմայքը այնքա՜ն մեծ եղաւ եւ ձեր հոչակը այնքա՜ն տարածուեց, որ աննշան արտանկարողներ, պղծելով Ռաֆայէլի յիշատակը, հաղարներով կրկնեցին ձեր դիմագծերը եւ խանութի մէջ, ոգէտ ամերիկացիների համար, ձեր աստուածային ոգին դունատ եւ ագան առարկայի վերածեցին:

«Ես գիտում եմ ձեր ներողամտութեան... Հայ հանճարը մեղաւոր չէ: Տեսէ՛ք, ձեզ շրջապատող ամբողջ այս մթնոլորտը հարազատ է: Միամիտ, անմիջական, անկեղծ: Պատերի վրայ, հնադարեան մեր նկարիչը հրեշտակներ է կախել ու վերակոչել է Մարիամ Աստուածածինը: Գիտեմ, նա ձեզ նման գեղեցիկ չէ. նա նիհար է, դեղնած այտերով, ներս մտած կուրծքերով, մելամաղձոտ, տխուր... Սակայն, հրաշալի գեղուհի, խոստովանեցէք, որ մինչեւ դուք այստեղ ձայնբոյթից տառապում էք ու մեր աղօթքների լեզուն չէք հասկա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան